

Առաջին բացակայութիւնը դաստիարակէն կը մեղմէր մասով՝ վիրաւորիչ թոնը այս դիտողութեանց, որոնք բանաձեւողի մտքին մէջ գերծ էին թշնամանող երանգէ, բայց բոլոր վանեցոց պատահածին նման ճիշդ հակառակ բրտութեամբ կը տպաւորէին լսողը:

Դաստիարակը ծաղկահար երեսը կը շոյէր յաճախ, ներքին գոհունակութեան յայտարար այդ շարժումով իր բարեմտութիւնը պարզելով դէմքին: Ու չէր զգար, այդ բարեմտութեամբ հովանաւոր, իր եռանդը, երբ հաստ, անհերքելի, մաթեմատիքական իր փաստերովը, ուռնակ-ուռնակ կը հարուածէր նրբին գլխիկը Մելիքխանեանցին, խուլ ու հաստ հաւանութեանը մէջ շրջապատի տղոց, մեծ մասով իր աշակերտները, իրեն պէս խանդավառ ու յեղափոխական աշխատանքի նուիրուած զինուորներ: Կենդանի, բուռն այս վիճաբանութիւնը ուրիշ մարզի մը կը յանգէր այլապէս շահեկան արդիւնքի: Կուսակցութեան քաղաքական ըմբռնումներու վերլուծումին մէջ ընկեր Մաթիկը սովորական իր ջերմութեամբ լայն ծաւալով կարծեց մօտեցած ըլլալ հիմնական անոր աշխարհահայեացքին, որով հայ յեղափոխութիւնը պարտաւոր էր որդեգրել միջազգային ընկերվարութեան սկզբունքները, եթէ չէր ուզեր լճանալ, Ասիոյ մէջ սահմանափակուիլ ու նեխիլ:

Դաստիարակը ահաւոր իր հմտութիւնը արժեցոլց փառքով...: Բանից դուրս եկաւ, որ անիկա եկեղեցիին հոյակապ հայրապետներուն չափ կը ճանչնար ընկերվարութեան մեծ առաքեալները, իրենց կենսագրութեանէն, ինչպէս գաղափարագրութեանէն, փախցուցած չըլլալով ոչ իսկ մէկ հատիկը պրոչիւրներուն ու յեղափոխական մամուլի այդ ուղղութեամբ յօդուածներուն:

Ընկեր Մաթիկը, հակառակ քիչ մը գիջող իր արհամարհանքին, չուրացաւ արժէքը այդ ստացումներուն, որոնք այդ պայմաններուն մէջ կը կրկնէին իրենց տարողութիւնը: Միշտ այժարած Ակոյի քարայրին մէջ, անիկա արդարութեամբ դատեց այդ կորովի ու փաստակուռ